

ՈՒՐԻՇԻ ԱՆՈՒՆՈՎ ՎՃԱՌՈՒՄՆԵՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԵՐՈՒ ԱՆՋԱՏ  
ԴՐԱՄԱՏԱՆ ՀԱՇԻԻ ԲԱՆԱԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԱՍԻՆ

(Requirements for Payees to Establish Dedicated Accounts)

Եթե Դուք, իբր ներկայացուցիչ, ուրիշի համար կը ստանաք ժամկետը անցած Յաւելեալ Եկամուտի Ապահովութեան վճառումներ (“past-due SSI benefits”), ստիպուած էք դրամատան մը մէջ անջար հաշիւ բանալ: Որպէսզի ժամկետը անցած վճառումները կարենան կատարուիլ, պէտք է որ մեզի այս հաշուին բացուած ըլլալուն իբր ապացոյց յետեւեալները ներկայացնէք՝ դրամատան անունն ու հասցէն, հաշուին թիւն ու տեսակը, հաշուին տիրոջ անունը, նաեւ հաշիւը բանալու համար պառկեցուած գումարը (ստիպողական ըլլալու պարագային):

Եթե դրամատունը հաշուին բացուելուն համար որոջ գումարի մը պառկեցուիլը կը պարտադրէ, այս նպատակին համար ուրիշ աղբիւրէ ստացուած փոքր գումար մը կարելի է գործածել: Ժամկետը անցած Յաւելեալ Եկամուտի Ապահովութեան առաջին վճառումը ստանալէ ետք, բայց մինչեւ յաջորդող ամսուն վերջանալը, պէտք է այդ գումարը ետ հանէք հաշիւէն:

Անմիջապէս որ մեզի այս յարուկ հաշուին բացուած ըլլալուն ապացոյցը ներկայացնէք, մենք ժամկետը անցած վճառումները այդ հաշուին մէջ պիտի պառկեցնենք: Այդ հաշուին մէջ պառկեցուած ժամկետը անցած վճառումները մենք հաշուի տիրոջ անձնական հարստութեան իբր մաս չենք նկատեր. նաեւ պառկեցուած վճառումներուն շահած տոկոսն ալ իբր եկամուտ կամ անձնական հարստութեան մաս չենք նկատեր: Առանց մեզմէ արտօնութիւն ստանալու այս հաշուին մէջ ուրիշ գումարներ չէք կրնար պառկեցնել: Հաշուին մէջ առանց մեր հաւանութեան ուրիշ գումարներ պառկեցուելու պարագային ստիպուած ենք հաշուին մէջի գումարը ամբողջութեամբ իբր հաշուի տիրոջ անձնական հարստութեան մաս նկատել, նաեւ շահուած տոկոսը իբր եկամուտ հաշուել:

Անջար հաշուին մէջի դրամը կարելի է փաստափանի, առողջապահական, ուսումի կամ աշխատանքի գիտելիքներու կատարելագործման դասընթաց քի ծախսերուն համար գործածել: Ընկերային Ապահովագրութեան իշխանութեանց կողմէ վաւերացուելու պայմանաւ, նպաստը նկալ անձին պէտքերուն ծառայելու եւ իր հաշմանդամութեան կամ կուրուութեան հետ առնչութիւն ունեցող յետեւեալ ծախսերն ալ արտօնելի կրնան ըլլալ՝ անձնական առորեայ պէտքերուն համար օգնութիւն, յարուկ պիտոյքի գնում, բնակարանի բարեփոխութիւն, բուժութիւն կամ վերականգնում, նաեւ անձին բնակած շրջանի Ընկերային Ապահովագրութեան գրասենեակին կողմէ վաւերացուած այլ առարկաներ կամ սպասարկութիւններ: Ստիպողական չէ, սակայն կը յանձնարարենք որ որեւէ ուրիշ ծախս ընելէ առաջ ստանաք Ընկերային Ապահովագրութեան իշխանութեան վաւերացումը:

Եթե այս անջար հաշուին պարունակած դրամը գիտակցաբար վերոյիշեալներէ դուրս նպատակներու համար ծախսէք, ստիպուած էք ձեր անձնական դրամէն մեզի այսպիսի ծախսերու համար հատուցում կատարել: Նոյնիսկ իբր Ձեր ներկայացուցած նպաստը նկալ անձը սկսի վճառումները ուղղակի ստանալ, հաշուին մէջի դրամը միմիայն վերոյիշեալ ծախսերուն համար կրնայ գործածուիլ:

**Ստիպուած էք անջար հաշիւէն քաշուած բոլոր գումարներուն մասին արձանագրութիւններ եւ ստացագիրներ պահել:**

Անորոջ կէտերու շուրջ լուսաբանութիւն ստանալու համար դիմեցէք որեւէ Ընկերային Ապահովագրութեան գրասենեակին՝ հեռախօսով, նամակով կամ անձամբ: